



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 12 >> Ապրիլի 2019թ.

N 2179/37-2019

ք. Արմավիր

<<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի ապրիլի 10-ի N ՄՈ/116-2019 և 2019 թվականի ապրիլի 10-ի N ՄՈ/118-2019 որոշումները, <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Մերձավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Արմինե Ավագյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature



VERIFIED OCSP 4/12/2019 15:19:57 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետի 2019 թվականի 12.04.2019 թվականի
N _____ կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ն. Սարգսյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
կրթության մշակույթի և սպորտի վարչության
կրթության բաժնի պետ:

Անդամներ՝

Գ. Գևորգյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
կրթության մշակույթի և սպորտի վարչության
կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Ս. Սաֆարյան -

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզպետարանի աշխատակազմի
ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի
առաջատար մասնագետ:

Հանձնող՝

Վոլոդյա Մարտիրոսյան -

<<Մերձավանի միջնակարգ դպրոց>>
պետական ոչ առևտրային կազմակերպության
տնօրենի պաշտոնակատար:

Ընդունող՝

Զարուհի Ստեփանյան -

<<Մերձավանի միջնակարգ դպրոց>>պետական
ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**



Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ